ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը, ՀՀ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Կենտրոնի սոցիալական աջակցության տարածքային բաժինը /այսուհետ՝ ՍԱՏԲ/ սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով Երևան քաղաքի Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց /այսուհետ՝ Կողմեր/ հրավիրվում են հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ /այսուհետ Խորհուրդ/:

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են քաղաքում գործող , ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները /հայտերը/ կարող են ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Կենտրոնի ՍԱՏԲ՝ մինչև 2016թ. հուլիսի 6-ը /հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 21Ա , հեռախոս 011518484/:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

ա) սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը,

բ) սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացումը: Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության Համաձայնագրում, որը տրամադրվում է Սոցիալական համագործակցության Համաձայնագրին միացած կողմերին:

ՀՀ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
Կենտրոնի սոցիալական աջակցության տարածքային բաժին